

Հարգելի՝ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող Արցախի Էլեկտրոնային Գրադարանի կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlis.am/>

E-mail: [info@artsakhlis.am](mailto:info@artsakhlis.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlis.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhlislibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



# ԱՐՄԵՆԻԱ ԱՌԱՍՏԱՅԱՆ

ԵՐԻԱՅԻ ՊԱՐԱՐՄԻ ԲԱՆՆԱԿԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԾ  
ԼՂԻՄ-Ը  
ԱԴՐԵԶԱՆԻ ԿԱԶՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
(1988-1991թթ.)

(Արխիվային նյութերի ժողովածու)

ԱՐՑԱԽ  
НЕОПЫЕМЛЕМАЯ  
ЧАСТЬ АРМЕНИИ

ԱՐՑԱԽԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐՄԻՆԵ ԱՌԱՋՎՅԱՆ

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ  
ԼՂԻՄ-Ը ԱԴՐԲԵԶԱՆԻ ԿԱՇՄԻՑ  
ՀԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
(1988-1991թթ.)  
*(Արխիվային նյութերի ժողովածու)*

«Դիզակ պյուս» իրատարակչություն  
Ստեփանակերտ-2018

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(53)

Ա 724

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.թ., դոցենտ  
Վարդգես Արամայիսի Սաֆարյան

Գիրքը տպագրության է Երաշխավորել Արցախի գիտական  
Կենտրոնի գիտխորհուրդը

Առաջամյան Ա.

Ա 724 Արցախահայության պայքարը ԼՂԻՄ-ը Աղրբեջանի  
կազմից հանելու համար (1988-1991 թթ.): Արխիվային  
նյութերի ժողովածու/ Ա. Առաջամյան.- Ստեփանակերտ:  
«Դիզակ պյուս» հրատ., 2018.- 112 էջ:

Սույն ժողովածուում հավաքագրված են 1988-1991թթ. ընդգրկող  
արխիվային մի շարք նյութեր, որոնք արտացոլում են արցախյան  
շարժման սկիզբը, զարթոնքը և պետականության հրչակման իրողու-  
թյունը: Նյութերից պարզորոշ երևում է արցախահայության անշեղ, հս-  
տակ պահանջը՝ ուղղելու 1921թ. պատմական անարդարությունը և  
մարզը դուրս հանելու աղրբեջանական կազմից ու միավորելու մայր  
Շայաստանի հետ: Բազմաթիվ դիմումներում ուղղված թե ԽՄԴՄ միու-  
թենական իշխանություններին, թե միջազգային տարրեր կառույցնե-  
րին, արտահայտված է նաև հայության կողմնարոշումը՝ հարցը լուծե-  
լու խաղաղ ճանապարհով և երկրորդ պատմական փաստերով հիմնա-  
վորված է ԼՂԻՄ-ը Աղրբեջանի կազմից անջատելու գաղափարը, ինչ-  
պես նաև ցույց է տրված մարզում ստեղծված կացությունը՝ կապված  
Աղրբեջանի վարած հակահայկական քաղաքականության դրսնորում-  
ների հետ:

Յետազոտությունն իրականացվել է № SCS 15.10.-005 գիտական  
թեմայի շրջանակներում:

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(53)

ISBN 978-9939-1-0732-5

© Ա. Առաջամյան, 2018

## ԱՌԱՋԱԲԱՆ

Ադրբեյջանի պամբուրքիստական քաղաքականության գխավոր թիրախը՝ Արցախը, 1921թ. հուլիսի 5-ի ՈԿ(թ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի ալենումի անօրինական որոշմամբ բռնակցվեց Ադրբեյջանին: Անտեսվեց և հաշվի չառնվեց ազգային ու պատմատարածքային գործոնը և առաջ մղվեց մտացածին «տնտեսական» գործոնը: Ադրբեյջանի պատմաբան Գ. Յասանլին իր աշխատության մեջ կեղծելով պատմական փաստերն, այդուհանդերձ խոստովանում է, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեյջանի կազմի մեջ մտցվեց վերջինիս նկատմամբ տնտեսական հակվածություն ունենալու պատճառաբանությամբ և անտեսվեց «պատմաէթնիկական» գործոնը<sup>1</sup>. փաստ, որը փաստորեն ընդունում է և ազերի պատմագիտությունը: Եվ այսպես 1921թ. հուլիսի 5-ի որոշման մեջ ասված էր.

ա. Ելելով մուսուլմանների և հայերի միջև ազգային խաղաղություն հաստատելու անհրաժեշտությունից և վերին ու ստորին Ղարաբաղի տնտեսական կապից՝ Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեյջանի ԽՍՀ-ի սահմաններում՝ նրան տրամադրելով մարզային լայն ինքնավարություն...<sup>2</sup>:

բ. Յանձնարարել Ադրբեյջանի կենտկոմին՝ որոշել ինքնավար մարզի սահմանները և ներկայացնել ՈԿ(թ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի հաստատմանը:

գ. Յանձնարարել կենտկոմի կովկասյան բյուրոյի նախագահությունը՝ բանակցել Յայաստանի կենտկոմի և Ադրբեյջանի կենտկոմի հետ՝ Լեռնային Ղարաբաղի արտակարգ կոմիսարի պաշտոնի թեկնածության շուրջը:

դ. Լեռնային Ղարաբաղի ինքնավարության շրջանակները պետք է որոշի Ադրբեյջանի կենտկոմը և ներկայացնի կենտկոմի կովկասյան բյուրոյի հաստատմանը:

1. Гасанли Г., История дипломатии Азербайджанской республики. Том 2, Москва, 2013, стр.249.

2. Խաչատրյան Կ., Արրահամյան Յ., Յայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Յայաստանի հետ միավորելու համար (փաստաթթերի և նյութերի ժողովածու), Երևան 2011, էջ 8:

Այսպիսով, ՈԿ(թ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 5-ի ոչ օրինական որոշմանը խախտվեց միջազգային իրավունքի հիմնարար՝ ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը, ոտնահարվեցին Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը (94.4%) կազմող հայության իրավունքները, անտեսվեցին Խորհրդային Հայաստանի շահերը: Արտահայտելով հայ ժողովրդի կամքը և քննադատելով ՈԿ(թ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի անօրինական որոշումը, արդեն հուլիսի 16-ին ՀԿ(թ)Կ կենտկոմը միանգամայն սխալ և անօրինական որակեց այն<sup>3</sup>: Միաժամանակ նշենք նաև այն, որ ի տարբերություն Ն. Նարիմանովի, Հայաստանի ներկայացուցիչ Ալ. Մյասնիկյանը այս հարցում չցուցաբերեց վճռականություն և սկզբունքայնություն և չպնդեց՝ «ղարաբաղյան հարցը» ՈԿ(թ)Կ կենտկոմի քննարկմանը ներկայացնելու պահանջը:

1921թ. հուլիսի 5-ի որոշումը չի կարող ծառայել որպես իրավական հիմք Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը և սահմանները որոշելու համար: Այն ընդունվել է երրորդ պետության՝ Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցության կողմից, որն օրինական իրավունքներ, կամ իրավագործություն չի ունեցել: Որոշումը կայացնելու պահին և Հայաստանը և Աղրբեջանը թեպետ խորհրդային, բայց անկախ պետություններ էին: Որոշումը բխում էր ոչ թե իրավական, կամ պատմական պատճառաբանությամբ, այլ մեկ անհատի՝ Նարիմանովի կամքի թելադրանքից: Այնուհետև, շուրջ երկու տարի պահանջվեց, որպեսզի Աղրբեջանը վերջապես իրագործեր Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու պահանջը: Չէինք սխալվի, եթե նշենք, որ արցախահայությանը սկսութեղի Վրա չտրվեց ինքնավարություն, այլ այն ձեռք բերվեց Երկարատև պայքարի արդյունքում: Եվ այսպես շուրջ 2 տարվա պայքարից հետո Խորհրդային Աղրբեջանի ղեկավարությունը 1923թ. հուլիսի 7-ին ստիպված էր ընդունել 1921թ. հուլիսի 5-ի Կովկասյան որոշման կետերի մեծամասնությանը հակասող «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի» կազմավորման մասին դեկրետը: Այս դեկրետի ընդունման քաղաքական իմանավորումը, ինչպես նշված էր փաստաթղթում, բխում էր «հայ-մուսուլմանական հարաբերությունների կարգավորման

3. Խաչատրյան Կ., Արրահամյան Հ., Աշվ. աշխ., էջ 9:

անհրաժեշտությունից միասնական պետության մեջ»: Յարկ է ընդգծել, որ 1921թ. հուլիսի 5-ի Կովբյուլոյի ապօրինի որոշումը Լեռնային Ղարաբաղը Աղրբեջանին թողնելու մասին, մի քայլ առաջ էր ԼՂԻՄ կազմավորման մասին 1923թ. ընդունված փաստաթղթից: ԼՂԻՄ-ի կազմավորման մասին որոշումը չնայած հռչակած ինքնավարությանը, այդուհանդերձ իրենով հակասում էր 1921թ. որոշման կետերին ոչ ի շահ հայերի:

Խախտելով ՌԿ(Բ)Կ Կովբյուլոյի որոշումը՝ Աղրբեջանի Կենտգործումը որոշեց մարզը ստեղծել «Լեռնային Ղարաբաղի հայկական մասից»: Մինչդեռ 1921թ. որոշման մեջ ասված էր. «Լեռնային Ղարաբաղը թողնել Աղրբեջանական ԽՍՀ սահմաններում՝ նրան տալով մարզային լայն ինքնավարություն՝ վարչական կենտրոն Շուշի քաղաքով»<sup>4</sup>: Այսինքն՝ լայն ինքնավարությունը պետք է տրվեր ոչ թե նրա մի մասին, այլ ողջ Լեռնային Ղարաբաղին: Արդյունքում՝ Լեռնային Ղարաբաղի շուրջ 12 հազար քառակուսի կմ տարածքից ստեղծվեց 4.4 հազար քկմ տարածք ընդգրկող ԼՂԻՄ: Այսպիսով Ադր. ԽՍՀ ղեկավարությունը որդեգրեց ԼՂԻՄ-ի որպես ազգային հայկական պետական կազմավորման ինքնուրույնությունը սահմանափակելու և նրա ազգային էությունը խեղաքյուրելու քաղաքականություն: Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի անվանման մեջ չի ընդգծվել նաև նրա ազգային պատկանելիությունը: Յատկանշական է, որ ԼՂԻՄ-ի հռչակման հենց նույն օրը Աղրբեջանի իշխանությունները հայտնեցին գաղափար հռչակել քրդական ինքնավարություն, հենց ԼՂԻՄ-ի սահմանագծին: Այս մասին խոստվանություն կա աղրբեջանցի պատմաբանի մոտ: Յենց նույն օրն իսկ որոշվեց բգկտել ընդունված որոշումն: Յայլական այդ ինքնավար մարզի սահմանները որոշելիս կանխամտածված ձևով, մարզի կազմի մեջ չեն մտցրել Արցախ-Ղարաբաղի լեռնային մասի գգալի հատվածը, դուրս է թողնվել Գյուլիստանի մելիքության ամբողջ տարածքը՝ այժմյան Շահումյանի շրջանն ու Խանլարի շրջանի, ինչպես նաև Դիզակի մելիքության գգալի հատվածը: Ղարաբաղից անջատեցին նրա հարթավայրային շրջանը և Աղդամ ավանը

4. Փաշայան Յ., Ղարաբաղյան հիմնախնդրի քաղաքական փաստարկները ԼՂԻՄ կազմավորման և Ադր. ԽՍՀ կազմից դուրսբերման շրջանի փաստաթղթերում (1923-1988), «21-րդ դար», հմ. 4, 2014թ., էջ 29:

դարձրին առանձին շրջանի կենտրոն: ԼՂԻՄ-ի տարածքը արհեստականորեն, նեղ շերտով, ընդամենը 6 կմ լայնությամբ, կտրվում է Շայաստանի հետ ընդհանուր սահման ունենալու հնարավորությունից: Այսպիսով, ԼՂԻՄ-ը, որն ընդգրկում էր Արցախի տարածքի մի հատվածը, չորս կողմից շրջափակվում է Աղրբեջանի կողմից ստեղծված և աղրբեջանցիներով բնակեցված վաշչական շրջաններով և մեկուսացվում Շայաստանից:

Փոփոխություն տեղի ունեցավ նաև մարզի ինքնանվանման մեջ: Սկզբում մարզը կոչվում էր ԱՕՀԿ (ինքնավար մարզ Լեռնային Ղարաբաղի), և փաստորեն անվանումն իսկ հուշում էր, որ ինքնավարությունը տրվել էր Լեռնային Ղարաբաղի մի մասին: 1936թ. մարզը վերանվանվեց ԻՀԿԱՕ (ԼՂԻՄ, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ) դրանով Աղրբեջանը փորձում էր Ղարաբաղի սահմանները նեղացնել հենց ինքնավարության շրջանակներում, մինչդեռ Լեռնային Ղարաբաղը դա միայն այն չէր, ինչ ինքնավար մարզն էր, մարզը Արցախի մի մասն էր կազմում միայն: Այսպիսով դեմ լինելով ինքնավարությանը Աղրբեջանական իշխանությունները փորձում էին ամեն կերպ սահմանափակել այն, իսկ նրանց տարիների քաղաքականությունը միտված էր մարզի հայաբափման աստիճանական նպատակին: Արցախահայությունը երբեկցե չհամակերպվեց Աղրբեջանի կազմի մեջ հայտնվելու փաստի հետ, և չնայած խորհրդային իշխանության և կոմունիստական գաղափարախոսության հարուցած բոլոր կապանքներին, մշտապես իր ձայնը բարձրացրեց պահանջելով լուծարել 1921թ. բռնակցման վերաբերյալ անօրինական որոշումը և մարզը միացնել Շայկական ԽՍՀ-ին: Այս նպատակին ուղղված՝ արցախահայությունը տարբեր ժամանակաշրջաններում բազմաթիվ դիմումնագրեր հիեց խորհրդային իշխանություններին, որոնց մեջ հստակ արտահայտված էր մարզում տիրող իրավիճակը՝ կապված Աղրբեջանի հակահայկական քաղաքականության դրսևումների հետ: Նշված դիմումներում արցախահայությունը ճիշտ բնորոշել է 1921թ. կովբյուրոյի անօրինական որոշման ողջ հետևանքները, վեր համել Արցախի՝ մայր Շայաստանի անբաժանելի մասը կազմելու պատճական հիմնավորումները և պահանջել ուղղելու տեղի ունեցած պատճական անարդարությունը:

1988թ. քաղաքական բարենպաստ պայմաններում, այսպես կոչված գորբաչովյան վերակառուցման շրջանում, վեր հառնեց ար-

ցախյան հիմնահարցը, որը ոչ թե մարել էր, այլ պարզապես անթեղվել խորհրդային իշխանության ժամանակաշրջանի անբարենպաստ պայմաններում: Այն կրկին հայտնվեց օրակարգում՝ պատմական արդարության վերականգնման ակնկալիքով: 1988թ. փետրվարի 20-ի ԼՂԻՄ ժողովորդական պատգամավորների 20-րդ արտահերթ գումարման նստաշրջանը ընդունեց պատմական որոշում դիմել Ադրբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդներին ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կողմից՝ Հայկական ԽՍՀ կազմի մեջ ընդգրկելու համար<sup>5</sup>: Որոշման մեջ ասված էր, որ արտահայտելով ԼՂԻՄ աշխատավորության, ժողովորդական պատգամավորների, շրջանային և քաղաքային խորհուրդների, ինչպես նաև մարզի բնակչության կանքը, նստաշրջանը խնդրում է խոր ընթացնումով նոտենալ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը և լուծել մարզը Ադրբեջանական ԽՍՀ կազմից՝ Հայկական ԽՍՀ կազմ ընդգրկելու հարցը, միաժամանակ դիմել ԽՍՀՄ Գերագույն խորհրդին հարցը դրական լուծելու ակնկալիքով:

1988-ի պատմական որոշումը տրամաբանական շարունակությունն է արցախյան հիմնահարցի բազմաթիվ քննարկումների, որի ակունքներն իշնում են մինչև 1918թ.: Այն հերթական օդակն էր արցախյան հիմնախմբի պատմական շղայի: Սակայն արցախյայության արդարացի պահանջին, Ադրբեջանը պատասխանեց հակահայկական ջարդերով /1988թ. փետրվար, հոկտեմբեր, 1990թ. հունվար, 1991թ. ապրիլ-մայիս/, տնտեսական շրջափակմանը:

1989թ. հունվարին ԽՍՀՄ իշխանությունները Լեռնային Ղարաբաղի տարածքում մտցրեցին կառավարման հատուկ ձև<sup>6</sup>: Լեռնային Ղարաբաղի ժողովորդական պատգամավորների հալածանք, անձնագրային ռեժիմի պատրվակով շարունակվող ձերբակալություններ, մարզի շրջափակում, ջարդեր. նման եղանակով Ադրբեջանը ԽՍՀՄ զինված ուժերի օժանդակությամբ ձգտում էր խեղդել արցախյայության ազգային ինքնորոշման իրավունքը, նրա արդարացի և օրինական պահանջը:

5. ԼՂԴ պետական արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 2, պահպանման միավոր 263, կապ 25, թերթ 1:

6. От самоопределения к международному признанию. Абхазия, Нагорный Карабах, Приднестровье, Южная Осетия, Тирасполь, 2008, стр. 139.

1991թ. արցախահայության համար ստեղծվեց չափազանց ծանր կացություն: Լեռնային Ղարաբաղի նկատմամբ շարունակվում էր Աղրբեջանի կործանարար քաղաքականությունը:

1991թ. մայիսի 29-ին մարզային գործկոմի ժողովրդական պատգամավորների կողմից դիմում հղվեց ԱՄՆ-ի նախագահ Շորջ Բուշին, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտտերանին, ԳՖՀ կանցլեր Գելմուտու Կոլեին, Միացյալ թագավորության վարչապետ Զոն Մեյջերին, ճապոնիայի վարչապետ Տոսիկո Կայֆուին, Իտալիայի հանրապետության նախարարների խորհրդի նախագահ Զուլիո Անդրեոստին, Կանադայի վարչապետ Բրայան Մալրունիին: Դիմումում ասված էր, որ, հաշվի առնելով այն հանգանաքը, որ աշխարհի զարգացած և առաջատար երկրների միջև սերտ տնտեսական և քաղաքական համագործակցությունը պետք է հանդիսանա ողջ աշխարհում կայունության և խաղաղության երաշխիքը, հաշվի առնելով յոթյակ պետությունների դերն ու ազդեցությունը աշխարհում տեղի ունեցող իրադարձություններում, ինչպես նաև ընդգծելով այդ պետությունների պատասխանատվությունը մարդկության առջև, խնդրում ենք կանգնեցնել Լեռնային Ղարաբաղում հայ բնակչության նկատմամբ կատարվող ցեղասպանությունը, որին զոհ են գնում անմեղ, խաղաղ մարդիկ: Դիմումի մեջ նշվում է, որ այդ գործողությունների հեղինակը ԽՍՀՄ դեկավարությունն է<sup>7</sup>: Միաժամանակ նշվում էր, որ իրավահավասարության և իր ճակատագիրը ինքնուրույն տնօրինելու ժողովուրդների իրավունքների սկզբունքներից ելնելով, որոշել արցախահայության ներքին և արտաքին քաղաքական ստատուսը, ինչպես նաև առաջիկա Լոնդոնում կազմակերպելով «յոթյակի» հանդիպման ժամանակ, քննարկել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը ԽՍՀՄ տարածքից դուրս գալու և քաղաքական ապաստան տրամադրելու հարցը, ազդել խորհրդային Միության դեկավարության վրա՝ արցախահայության նկատմամբ ցեղասպանության քաղաքականությունից հրաժարվելու համար:

1991թ. մայիսի 17-ին նոր դիմում հղվեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Խավիեր Պերես Դե Կուէյարին, ԱՄՆ-ի նախագահ Շորջ Բուշին, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտտերանին, Աների-

7. ԼՂԴ ՊԱ, ֆ. 1, գ. 1, պ.մ. 299, կ. 50, թ. 4:

կայի, Եվրոպայի, ճապոնիայի, Հարավային Կորեայի, Սինգապուրի, Ֆիլիպինների նախագահներին: Դիմումում ասված էր, որ Լեռնային Դարաբաղի հայության բռնի տեղահանման քաղաքականությունը իրենց հայրենի հողից, ոչ նիայն չի կանգնեցվում, այլ նույնիսկ հասնում են վտանգավոր սահմանների: «Լեռնային Դարաբաղը, ասված էր դիմումում, այժմ դարձել է ազգայնամոլության, քացահայտ ատելության և պետական ահաբեկչության դաշտ՝ թելադրված ԽՄՀՄ կենտրոնական իշխանությունների կողմից»<sup>8</sup>: Նշվում էր, որ հայ բնակչության ցեղասպանությունն իրականացվում է խորհրդային բանակի և Ադրբեյջանի զինված ուժերի կողմից: 1991թ. մայիսի վերջերին ամբողջությամբ հայաթափվել էին Արփազյադուկ, Սպիտակաշեն, Պետրոսաշեն, Խցաբերդ, Քարագլուխ, Բանագուր, Մյուլքադարա, Շամձոր, Եղծահող, Մեծ Շեն և այլ գյուղեր: Անեն օր ավելանում են բնակելի այն վայրերի թիվը, որոնք հայտնվում են ոչնչացման սպառնալիքի տակ, անպատիծ սպանում են մարդկանց, որոնց թիվը արդեն հասնում էր հարյուրների: «Ըստ Էռլիքան ԽՄՀՄ և Ադրբեյջանական իշխանությունների կողմից լրիվությամբ ոտնահարվում են Լեռնային Դարաբաղի հայ բնակչության իրավունքները»: Բոլոր դիմումներում նշվում էր, որ ԼՂԻՄ-ում կոպիտ կերպով ոտնահարվում են հայ բնակչության սահմանադրական իրավունքները, ընդհուպ մինչև ԼՂԻՄ-ի օդինական իշխանությունների լուժարումը, արցախահայությունը ենթարկվում են բարոյական, քաղաքական, ֆիզիկական ճնշման ընդհուպ մինչև քացահայտ բռնություն և մարդկային արժանապատվության ստորացում: Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի, Շամախիի, Շամքորի, Խանլարի և Դաշքեսանի շրջաններում տեղի ունեցած դեպքերը Ադրբեյջանի որդեգրած հայցինց քաղաքականության մասին են վկայում:

1991թ. Ադրբեյջանի ղեկավարությունը որոշում ընդունեց Շահումյանի շրջանը լուժարելու և այն Գերանքոյի շրջանի մեջ մտցնելու մասին: 1991թ. հունվարի 15-ին ԽՄՀՄ Գերագույն Խորհրդի նախագահի տեղակալ Գ.Յանաեվին, ԽՄՀՄ Գերագույն Խորհրդի նախագահ Ա.Ի.Լուկյանովին և Հայկական ԽՄՀ Գերագույն Խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին հղած դիմումում ասվում էր, որ Ադրբեյջանի կողմից որգեղրած արցախյան հիմնախնդրի լուծման

8. ԼՂԴ ԴԱ, ֆ. 1, ց. 1, պ.մ. 299, կ. 50, թ. 17:

տարբերակն արդեն բացահայտ իրականացվում է: Դիմումում արցախահայությունն իր բողոքն էր հայտնում Շահումյանի շրջանի՝ պատմական Գյուլիստանի մելիքության լուծարման և այն Աղրբեցանական շրջանի մեջ ներառելու մասին: «Շրջանը - /Շահումյանի Ա.Ա./ 100 տոկոսանոց հայ բնակչությամբ, կազմվեց 1930թ.: 1940թ. նրա կազմի մեջ ընդգրկվեցին 4 գյուղխորհուրդներ հարևան աղբեցանական շրջաններից, ինչպես տեսնում ենք հեռու գնացող նպատակներով»<sup>9</sup>: Դիմումում խնդրվում էր պահպանել Շահումյանի շրջանը որպես վարչատարածքային միավոր:

Շրջափակման մեջ գտնվող Լեռնային Ղարաբաղում իրավիճակը գնալով սրվում էր: Միութենական իշխանությունների աջակցությամբ Աղրբեցանի իշխանությունները շարունակում էին մարզի ժողովրդագրական պատկերը փոփոխելու հին ռազմավարությունը: 1991թ. հունվարին Աղրբեցանի ղեկավարությունը որոշում ընդունեց ԼՂԻՄ-ին հարակից ավելի քան 80%-ով հայաբնակ Շահումյանի շրջանը աղրբեցանաբնակ Կասում-Խսմայիլի շրջանի մեջ ընդգրկելու մասին: Արցախահայության անունից 1991թ. հունվարի 15-ին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահ Ա.Ի. Լուկյանովին, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահի տեղակալ Յանաեվին և Յայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին հղած դիմումում ասվում էր, որ Աղրբեցանի կողմից որդեգրած արցախյան հիմնահարցի լուծման տարբերակն արդեն բացահայտ իրականացվում է: Դիմումում արցախահայությունն իր բողոքն էր հայտնում Շահումյանի շրջանի՝ պատմական Գյուլիստանի մելիքության լուծարման և այն աղրբեցանական շրջանի մեջ ներառելու մասին: «Շրջանը, ասված էր դիմումում, իր 100 տոկոսանոց հայ բնակչությամբ, կազմվեց 1930թ.: 1940թ. նրա կազմի մեջ ընդգրկվեցին 4 գյուղխորհուրդներ հարևան աղբեցանական շրջաններից, ինչպես տեսնում ենք հեռու գնացող նպատակներով»<sup>10</sup>: Դիմումում խնդրվում էր հասցեատերերից պահպանել Շահումյանի շրջանը որպես առանձին վարչատարածքային միավոր:

Արցախահայության համար չափազանց ծանր այս ժամանակաշրջանում, ԼՂԻՄ մարզային գործկոմի ժողովրդական պատգա-

9. ԼՂԴ ՊԱ, ֆ. 1, գ. 1, պ.մ. 299, կ. 50, թ. 49:

10. ԼՂԴ ՊԱ, ֆ. 1, գ. 1, պ.մ. 299, կ. 50, թ. 49:

մավորների, շրջանային խորհուրդների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների ղեկավարների կողմից հաճախ էին կազմվել բողոքի դիմումներ կամ խնդրագրեր ուղղված ԽՍՀՄ միութենական իշխանություններին, ինչպես նաև ՄԱԿ-ի, Եվրոպական մի շարք երկրներին, ԱՍՍ-ի ղեկավար շրջանակներին արցախյան հիմնահարցի վրա վերջիններիս ուշադրությունը սևելու համար: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում հայությունն իր անկախությունը վերականգնելու նպատակով, շարժում կազմակերպելու համար, օժանդակության դիմումնագրեր է հղել այս կամ այն տերության հասցեով: Սակայն պատմության մեջ ավանդած դասերը ցուց տվեցին, որ իրական տեղաշարժ հօգուտ ժողովրդի ազատագրական շարժման մեջ արձանագրվեց այն պահին, երբ այդ շարժումը կողմնորոշվեց ղեպի սեփական ուժերին ապավինելու գործոնը, երբ բարձրացվեց համազգային պայքարի դրոշ: Արցախահայության արդարացի պայքարը, ազատագրական շարժումը ևս աչքի ընկավ արցախահայության հանդեպ առողեջանցիների իրագործած բարբարոսությունների նկատմամբ բողոքի և դիմումների կազմամբ, որոնց բովանդակությունից և հասցեագրումներից կարելի է կազմել մի քանի կարևոր եզրակացություններ: Սկզբնական շրջանում այդ դիմումները հղվում էին միութենական իշխանությունների հասցեով: Այսպես 1991թ. հունվարի 22-ին ԽՍՀՄ նախագահ Գորբաչովին, տեղակալ Յանաբիկին, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահ Լուկյանովին, Սերգին գործերի նախարար Պուգոյին և ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներին ԼՂԻՄ-ի աշխատավորության անունից հղած դիմումում ասվում էր. «Մենք, ԼՂԻՄ-ի աշխատավորներս, դադարեցնելով արյունաբերական ծեռնարկությունների, շինարարական կազմակերպությունների, առողջապահական և լուսավորական հիմնարկների, կենսագործունեության այլ օբյեկտների աշխատանքը, դուրս ենք եկել բողոքի ընդդեմ Լեռնային Ղարաբաղի, Շահումյանի շրջանի և Գետաշենի Ենթաշրջանի հայ բնակչության՝ 3 տարի շարունակվող բացահայտ տեռորի և բռնությունների:

Մեզ միանգանայն պարզ է աղբեջանական ղեկավարության կողմից իրականացվող քաղաքականության նպատակը, որն արդեն շարունակվում է շուրջ 70 տարի: Մեզ միայն անհասկանալի է երկրի ղեկավարության /ԽՍՀՄ – Ա.Ա./ բնած դիրքորոշումը այս սուր

կոնֆլիկտում»<sup>11</sup>: Այնուհետև դիմումում ասվում էր, որ հավատալով վերակառուցմանը և աջակցելով նրան, արցախահայությունը որպես պատասխան ստացավ արտակարգ իրավիճակ փաստացի ռազմական իրադրության պայմաններում, մարզի շրջափակում, պետական մարմինների լուծարում, որին հետևեցին բազմաթիվ ծերակալություններ, շարժման ակտիվիստների նկատմամբ վայրագություններ, հակահայկական տրամադրություններ: Վերջում նշված էր, որ մինչև արցախյան հիմնախնդրի քաղաքական լուծումը, պահանջում ենք ճանաչել ԼՂԻՄ մարզխորհրդի և մարզային գործկոմիտեի լիազորությունները<sup>12</sup>: Եվ ԼՂԻՄ-ի տարածքից հանել Աղրբեջանի հանրապետության գինված ուժերին:

ԽՍՀՄ ղեկավարության հասցեով 1991թ. փետրվարի 6-ին հղած դիմումում ասվում էր, որ Աղրբեջանի հատուկ նշանակության ուժեղի բարբարոսական գործողությունների արդյունքում, որոնք ահաբեկում են խաղաղ բնակչությանը, մահանում են անմեղ մարդիկ, սնանկանում են հայկական բնակավայրերը: «ԼՂԻՄ-ի շուրջը ստեղծելով քաղաքական, տնտեսական և տրանսպորտային օլակ, Աղրբեջանի իշխանությունները վարում են կեղտոտ քարոզարշավ՝ ուղղված հասարակայնությանը խարելուն, երկու ժողովուրդների միջև կոնֆլիկտի սրման»<sup>13</sup>: «Աղրբեջանն իր քաղաքականությամբ ավելի է սրում իրավիճակը, ուժեղացնում մեր վճռականությունը ազատ կյանքի ծգտման, մեր նախնիների հողի լիիրավ տերերը լինելուն: Մեզ ոչ չի կարող մեր ընտրած ուղուց շեղել, այդ ուղին ընտրել է ժողովուրդը, որն իր կամքն է արտահայտել բոլոր մակարդակների ժողովուրդական պատգամավորների խորհրդի նստաշրջաններում, միութենական իշխանություններին ուղղված դիմումներում»<sup>14</sup>: 1991թ. փետրվարին լրացավ արցախյան շարժման 5 տարին: Տեղի ունեցած բազմահազար ցույցի աշխատավորների կազմած դիմումում, որն ուղարկվեց միութենական իշխանություններին, ասվում է, որ 1988թ. պատմական որոշումը դարձավ ժողովրդի

11. ԼՂԴ ՊԱ, ֆ. 1, գ. 1, պ.մ. 308, կ. 52, թ. 1:

12. Վերջինիս լիազորությունները դադարեցվեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1989թ. հունվարի 12-ի հրամանով:

13. ԼՂԴ ՊԱ, ֆ. 1, գ. 1, պ.մ. 308, կ. 52, թ. 4:

14. Նույն տեղում, թ. 5:

կամքի արտահայտություն, որը շուրջ 70 տարի ձգտում է միավորել Հայկական ԽՍՀ-ին, որի կամքին հակառակ 1921թ. այն բռնակցվեց Աղրբեջանին: Սակայն այս հարցում ինչպես նշված էր դիմումում, Աղրբեջանը բռնեց վերակառուցման ոգուն և գաղափարին ոչ համապատասխան դիրքորոշում, որի պատճառով էլ մեր «ժողովրդավարական պայքարը վեր ածվեց ազգամիջյան կոնֆլիկտի»<sup>15</sup>: Անարդարացի կերպով հայ ժողովրդից նաևնատված մի հատվածի նկատմամբ Աղրբեջանի իշխանությունները գործի դրեցին համընդհանուր ճանաչված մարդու իրավունքների և ազատությունների դժոխյային ճնշման եղանակներ: Ողջ Աղրբեջանական ԽՍՀ-ում մեր հայրենակիցների նկատմամբ կազմակերպված զանգվածային ջարդերից ու սպանություններից հետո ԼՂԻՄ-ը զրկվեց պետական, կուսակցական և հասարակական իշխանություններից: Շրջափակումը, սպառնալիքը, սպանություններն ու ջարդերը, մարդկային և ազգային արժանապատվության ստորացումները, ահա ոչ ամբողջական թվարկումը աղրբեջանական գինված ուժերի գործողությունները:

1991թ. գարնանը իրավիճակն առավել սրվեց: ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության ներքին զորքերը և Աղրբեջանի օմոնականները 1991թ. ապրիլի 30-ին համատեղ լայնածավալ գործողություններ սկսեցին՝ իբր Գետաշենում և Մարտունաշենում գտնվող ապօրինի գինված միավորումներին գինաթափելու համար: Դա տիրահոչակ «Կոլցո» գործողությունն էր, որի նպատակը Գետաշենի և Մարտունաշենի բնակչության բռնագաղթեցումն էր<sup>16</sup>:

1991թ. մայիսի 15-ին ԼՂԻՄ մարզխորհրդի հաստուկ որոշմամբ մարզում հայտարարվեց արտակարգ իրավիճակ: Որոշման մեջ ասված էր, որ մարզի տնտեսական շրջափակման ուժեղացումը, Խանլարի շրջանի Գետաշենից, Շուշիի և Յաղորութի շրջանի մի շարք գյուղերի հայ բնակչության շարունակվող բռնագաղթը, Աղրբեջանին սահմանակից շրջաններում տիրող կողոպուտը, ինչպես նաև ժողովրդական տնտեսության ծանր կացությունը ստեղծել են արտակարգ իրավիճակ: Յաշվի առնելով այդ ամենը՝ մարզի տնտեսության անխափան գործունեության, կենսապահովման, հասարակա-

15. ԼՂԴ ՊԱ, ֆ. 1, գ. 1, պ.մ. 308, կ. 52, թ. 21:

16. Արահամյան Հ., Մարտնչող Արցախը, Գիրք 4, 1985-2000, էջ 266:

կան կարգի պահպանման նպատակով 1991թ. մայիսի 15-ից հայտարարել ԼՂԻՄ-ում արտակարգ իրավիճակ և ստեղծել ժամանակավոր արտակարգ հանձնաժողով<sup>17</sup>: Իրավիճակը գնալով սրբուն էր՝ դառնալով օրիհասական: Կոլցո գործողությունն իր շարունակությունը գտավ հայկական մյուս գյուղերում: Անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակով գործի էր որպես ԽՍՀՄ ներքին գործերի և ադրբեջանական օմոնի ուժերը:

1991թ. հուլիսին ԼՂԻՄ իշխանությունների կողմից քննարկվում էր Ադրբեջանական իշխանությունների հետ բանակցելու խնդիրը: Հանդիպումը տեղի է ունեցել Բաքվում հայկական պատվիրակության, որին գլխավորում էր Լեռնարդ Պետրոսյանը, և Ադրբեջանի նախագահ Ա.Մութավիրովի, Կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար Վ. Պույանիչկովի, կենտկոմի քարտուղար Դաշտամիրովի միջև: Հանդիպման ժամանակ երևաց Ադրբեջանի ապակառուցողական, թշնամական կողմնորոշումը: Ադրբեջանի նախագահ Ա.Մութավիրովը ցիմիկաբար հայտարարում է. «Մենք թույլ չենք տա Հայաստանի միջանտությունը մարզի կառավարման գործում: Մշակութային կապերի հաստատում, լեզվի հարցեր, գրականության և այլն, խնդրեմ, ոչ մեկ չի խանգարի: Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղար ընկ. Սարգսյանը գրում է, թե իրենք բարձրացնելու են մարզի կարգավիճակը: Եսկ ո՞վ է նա, որ բարձրացնի: Ես ասել եմ ընկ. Գորբաչովին այդ մասին, որպեսզի թույլ չտրվի միջանտություններ: Իմիջայլոց, երբ ԽՍՀՄ նախագահի օգնականը նոտեցավ ինձ և ասաց. «Ղարաբաղին տանք ինքնավար հանրապետության կարգավիճակ», ես պատասխանել եմ, որ արդեն ուշ է, գնացքը անցել է»<sup>18</sup>: Այնուհետև Ադրբեջանի նախագահը հորդորեց պատվիրակությանը Հայաստանից անկախ գործելու: Ահա այսպիսի քաղաքականություն էր որդեգրել Ադրբեջանը: Մինչ հայկական կողմը բարձրացնում էր իր արդարացի ծայնը անջատվել Ադրբեջանից և միանալ Հայաստանին, Ադրբեջանի ղեկավարությունը անեն կերպ փորձում էր ոչ միայն խլացնել այն, այլ նաև հարցը մտցնել փակուղի: Այսպիսով, արցախահայության արդարացի պահանջը հիմնավորված պատմական անհերքելի փաստարկներով, ինչպես միշտ մնում

17. ԼՂԴ ՊԱ, ֆ. 1, գ. 2, պ.մ. 314, կ. 28, թ. 11:

18. Նույն տեղում, պ.մ. 320, թ. 15:

էր անպատասխան: Դրան ի պատասխան Աղրբեջանը Արցախի նկատմամբ սանձազերծեց լայնամասշտար պատերազմ: ճիշտ կողմնորոշվելով ստեղծված իրավիճակում, արցախսահայությունը դրսնորելով իր անշեղ ու հստակ պատմական կանքը, 1991թ. սեպտեմբերի 2-ին հռչակեց ԼՂՀ անկախությունը, սակայն նիաժանանակ հայությունը ստիպված էր գինված պայքարով տեր կանգնել իր հայրենի երկրամասի նկատմամբ ունեցած լիիրավ իրավունքներին:

Սույն ժողովածուի մեջ հավաքագրված են արխիվային նյութեր, որոնց մեջ արտացոլված են արցախյան շարժման վերաբերյալ տեղեկություններ, մասնավորապես ներկայացված են արցախսահայության բազմաթիվ դիմում-պահանջագրերը ուղղված ԽՄՀՍ իշխանություններին, միջազգային կազմակերպություններին, համաշխարհային հանրությանը՝ մարզը Աղրբեջանի կազմից անջատելու և Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասը ճանաչելու խնդրանքով: Սակայն ինչպես խորհրդային, այնպես էլ ետխորհդային շրջանում արցախսահայության արդարացի պահանջը մնում էր անպատասխան, արդյունքում հայությունը ստիպված էր իրեն պարտադրված պատերազմում պացուցել իր իրավունքների ու պահանջների արդարացիությունը ու վերականգնել պատմական արդարությունը:

**РЕШЕНИЕ**  
**О ходатайстве перед Верховными Советами  
Азербайджанской и Армянской ССР о пере-  
даче НКАО из состава Азербайджанской ССР  
в состав Армянской ССР.**

Идя навстречу пожеланиям трудящихся, воле избирателей, всего населения области, Нагорно-Карабахский областной Совет народных депутатов обсудил вопрос о передаче НКАО из состава Азербайджанской ССР в состав Армянской ССР.

Областной Совет народных депутатов отмечает, что повсеместно были проведены сельские сходы, собрания трудовых коллективов, сессии районных и городских Советов народных депутатов, на которых были приняты решения, в соответствии с пожеланиями населения области, ходатайствовать перед высшими органами государственной власти Союза ССР, Азербайджанской ССР и Армянской ССР о передаче автономной области из состава Азербайджанской ССР в состав Армянской ССР.

Учитывая вышеизложенное, заслушав и обсудив выступления депутатов НКАО о ходатайстве перед Верховными Советами Азербайджанской ССР и Армянской ССР о передаче НКАО из состава Азербайджанской ССР в состав Армянской ССР внеочередная сессия Нагорно-Карабахского областного Совета народных депутатов РЕШИЛА:

Идя навстречу пожеланиям трудящихся НКАО, просить Верховный Совет Азербайджанской ССР и Верховный Совет Армянской ССР проявить чувство глубокого понимания чаяний армянского населения Нагорного Карабаха и решить вопрос о передаче НКАО из состава Азербайджанской ССР в состав Армянской ССР. Одновременно ходатайствовать перед

Верховным Советом Союза ССР о положительном решении данного вопроса.

Поручить редакции газеты “Советакан Карабах” - “Советский Карабах” и областному комитету по телевидению и радиовещанию передать информационные выпуски по прошедшей сессии.

*ГА НКР, ф. 1, он. 1, ед. хр. 263, с. 25, стр. 3.*

## **ДЕКЛАРАЦИЯ о провозглашении Нагорно-Карабахской Республики**

Совместная сессия Нагорно-Карабахского областного и Шаумяновского районного Советов народных депутатов с участием депутатов Советов всех уровней, выражая волю народа, закрепленную фактически проведенным референдумом и в решениях органов власти НКАО и Шаумяновского района в 1988-1991 гг., его стремление к свободе, независимости, равноправию и добрососедству;

констатируя провозглашение Азербайджанской Республикой “восстановления государственной независимости 1918-1920гг.”;

учитывая, что проводимая в Азербайджане политика апартеида и дискриминации создала в республике атмосферу ненависти и нетерпимости к армянскому народу, приведшую к вооруженным столкновениям, человеческим жертвам, массовой депортации жителей мирных армянских сел;

основываясь на действующей конституции и законах Союза ССР, предоставляющих народам автономных образований и компактно проживающим национальным группам право на самостоятельное решение вопроса о своем государственно-правовом статусе в случае выхода союзной республики из ССР;

отмечая, что территория Шаумяновского района была насильственно отторгнута от Нагорного Карабаха и, считая стремление армянского народа к воссоединению естественным и соответствующим нормам международного права;

стремясь к восстановлению добрососедских отношений между армянским и азербайджанскими народами на основе взаимного уважения прав друг друга;

принимая во внимание сложность и противоречивость обстановки в стране, неопределенность судьбы будущего Союза, союзных структур власти и управления;

уважая и следуя принципам Всеобщей Декларации прав

человека и Международного пакта об экономических, социальных и культурных правах, Международного пакта о гражданских, политических и культурных правах, и рассчитывая на понимание и поддержку международного сообщества,

ПРОВОЗГЛАШАЕТ  
НАГОРНО-КАРАБАХСКУЮ РЕСПУБЛИКУ В ГРАНИЦАХ  
НЫНЕШНЕЙ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ  
ОБЛАСТИ И СОПРЕДЕЛЬНОГО ШАУМЯНОВСКОГО  
РАЙОНА. СОКРАЩЕННО НКР

Нагорно-Карабахская Республика пользуется полномочиями, предоставленными республикам Конституцией и законодательством СССР и оставляет за собой право самостоятельно определять свой государственно-правовой статус на основе политических консультаций и переговоров с руководством страны и республик.

На территории Нагорно-Карабахской Республики до принятия Конституции и законов НКР действуют Конституция и законодательство СССР, а также другие ныне действующие законы, которые не противоречат целям и принципам настоящей Декларации и особенностям Республики.

Совместная сессия Нагорно-Карабахского областного и Шаумяновского районного Советов народных депутатов с участием депутатов всех уровней

2 сентября 1991 года

**ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ**  
**ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՍԻՆ**

Ելնելով յուրաքանչյուր ազգի ինքնորոշման իրավունքից, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում անցկացված 1991 թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեով հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի բնակչության գերակշիռ մեծամասնության ազատորեն արտահայտված կամքի հիման վրա, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհուրդն՝ Ելնելով իր ճակատագիրը ազատորեն, ինքնուրույն որոշելով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության անկապտելի իրավունքից, գիտակցելով, որ միայն քաղաքական ու տնտեսական միասնական տարածություն ունեցող Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում ազգերի ազատ և իրավականար միավորումն է երաշխավորում նրանց համակողմանի զարգացումը, անհրաժեշտ համարելով միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում գտած նորմերի և սկզբունքների վրա հիմնված օրենսդրական բազայի ստեղծումը, ընդունում է սույն սահմանադրական Օրենքը:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը անկախ ժողովրդավարական պետություն է, որն ինքնուրույն կերպով է որոշում այլ պետությունների հետ համագործակցության ձևերը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ամբողջ իշխանությունը պատկանում է ժողովորդին և Ելնում է ժողովորդից, որն այն իրագործում է ինչպես անմիջականորեն, այնպես էլ՝ իր կազմից կազմակերպող ներկայացուցական մարմինների միջոցով: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնիշխանությունն արտահայտվում է նրա կողմից իր ամբողջ տարածքում օրենսդիր, գործադիր և դատական բարձրագույն իշխանության ինքնուրույն իրականացման ձևով՝ իշխանության ինքնուրույն բնակչող բոլոր ազգերի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ինքնուրույն է լուծում հանրապետության քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային շինարարությունը, նրա վարելա-տարածքային կառուցվածքին առնչվող բոլոր հարցերը:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմի մեջ մտնում են Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու, Ջաղորուի, Շահումյանի, Շուշիի շրջանները:

Հանրապետության մայրաքաղաքը Ստեփանակերտ քաղաքն է:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքը անօտարելի է և չի կարող փոփոխվել առանց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ամբողջ բնակչության հանրաքվեով արտահայտված բնակչության ազատ կամ արտահայտման վրա հիմնված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի:

Այլ պետությունների /հանրապետությունների/ հետ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ունեցած սահմանները կարող են փոփոխվել միայն նրանց հետ փոխամածամությամբ:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրահրապական կարգավիճակը չի կարող փոփոխվել առանց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի որոշման: Այլ հանրապետությունների հետ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փոխարարերությունները կառուցվում են նրանց իրավահավասարության, համագործակցության, ինքնիշխան իրավունքները փոխադարձ հարգելու և միմյանց ներքին գործերին չնիշանտելու սկզբունքների վրա:

Այնպիսի հարցերի լուծմանը միջամտելը, որոնք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավունքի մեջ են մտնում, պետք է գնահատվի իբրև նրա ինքնիշխան իրավունքների ուսնահարում:

5. Յողը, ընդերքը, ջուրը, անտառները, բնական մյուս պաշարները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային հարստությունն են, Հանրապետության սեփականությունը և պատկանում են Լեռնային Ղարաբաղի ժողովրդին:

6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկան կազմում է մեկ միասնական ժողովրդատեսական համալիր, որն ընդգրկում է հանրապետության տարածքում իրականացվող արտադրության, բաշխման և փոխանակման բոլոր օղակները:

Հանրապետությունում ճանաչվում է սեփականության բոլոր տեսակների իրավահավասարությունը, քաջալերվում՝ ազատ ձեռներեցությունը: Հանրապետությունը պահպանում է սեփականատերերի բոլոր իրավունքները, նպաստավոր պայմաններ ստեղծում տն-

տեսական գործունեության բոլոր տեսակների համար՝ նպատակ ունենալով պահպանել հանրապետության տնտեսական ինքնուրույնությունը:

7. Հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհուրդն է, իսկ նատաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում՝ Գերագույն խորհրդի նախագահությունը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախարարների խորհուրդը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական իշխանության գործադիր և կարգադիր բարձրագույն մարմինն է:

Մինչև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրության ընդունելը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի, նրա նախագահության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախարարների խորհրդի լիազորությունները որոշվում են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի մասին» «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախարարների խորհրդի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով, սույն օրենքով, օրենսդրական այլ ակտերով:

8. Հանձինս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական իշխանության և կառավարման բարձրագույն մարմինների, նրա իրավասության մեջ մտնում են.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրությունը և օրենքներ ընդունելը, սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնելը, դրանց խախտումը վերահսկելը:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանների փոփոխումը, ազգատարածքային միավորումների ստեղծումը, վերացումը, շրջանների, քաղաքների, ավանների, գյուղերի և մյուս բնակավայրերի ստեղծումը, անվանումը և վերանվանումը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչական կենտրոնների սահմանումը և տեղափոխումը:

3. Հանրապետության ինքնիշխանության, պետական կարգի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների պահպանումը:

4. Պետական իշխանության և կառավարման մարմինների բոլոր օլակների գործունեության կարգի սահմանումը:

5. Մեկ միասնական սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական քաղաքականություն վարելը, հողի, ընդերքի, անտառների և ջրի, բնական մյուս պաշարների օգտագործման ու շահագործման կարգի սահմանումը, էկոլոգիական քաղաքականության իրականացումը:

6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացման պետական պլանների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի մշակումն ու հաստատումը և դրանց կատարման մասին հաշվետվությունների հաստատումը:

7. Հանրապետության ֆինանսա-վարկային հիմնարկների գործունեության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի կազմավորման համար ստացվող եկամուտների համեմատը վերահսկողության սահմանումը, միասնական հարկային քաղաքականություն վարելը:

8. Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի, սոցիալական ոլորտի ղեկավարումը, պատմության, մշակույթի և բնության հուշարձանների պահպանումը:

9. Ներքին գործերի և ազգային անվտանգության մարմինների ղեկավարումը, զինված ուժերի կազմավորումը և նրանց գործունեության ղեկավարումը:

10. Սահմանադրական վերահսկողության կոմիտեի ստեղծումը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի, Հանրապետության արդարադատության մյուս մարմինների կազմավորումը, նրանց իրավասության և աշխատակազմի որոշումը:

11. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գլխավոր դատախազի նշանակումը և պաշտոնից ազատումը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության գործունեության կազմակերպման և կարգի հիմունքների սահմանումը:

12. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանի կողմից դատապարտված քաղաքացիներին ներում շնորհելը:

13. Հանրապետության արտաքին քաղաքական գործունեությունը և ներկայացուցչությունը միջազգային հարաբերություններում: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը իրավունք ունի անմիջական հարաբերությունների մեջ մտնել օտարերկրյա պետությունների հետ, պայմանագրեր կնքել նրանց հետ, ոիկանագիտական և

հյուպատոսական ներկայացուցիչներ փոխանակել, մասնակցել միջազգային կազմակերպությունների գործունեությանը:

14. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական ինքնիշխանության խորհրդանիշներին առնչվող հարցերի վերաբերյալ որոշումների ընդունումը:

15. Հանրապետական նշանակության այլ հարցերի լուծում:

9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սահմանվում է միասնական քաղաքացիություն: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման և կորսման հիմքն ու կարգը սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիության մասին օրենքով: Կրկնական քաղաքացիության ձեռքբերման կարգը և հիմքը կարգավորվում են այլ պետությունների /հանրապետությունների/ հետ պայմանագրերով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիները անկախ ծագումից, սոցիալական և ունեցվածքային դիրքից, ռասսայական և ազգային պատկանելությունից, սեռից, կրթությունից, լեզվից, կրոնի նկատմամբ վերաբերնունքից, գրադարձի տեսակետից և բնույթից, բնակության վայրից, հավասար են օրենքի առաջ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավահավասարությունը ապահովվում է տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներում:

Հանրապետությունը ապահովում է քաղաքացիների իրավունքների ազատություն այն լրիվ ծավալով, որը պարունակվում է մարդու իրավունքների համընդհանուր հոչակագրի մեջ:

10. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական լեզուն հայերենն է:

Հանրապետության պետական հոգատարությունն է նրա ըստ ամենայնի զարգացումը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ապահովում է մյուս լեզուների ազատ կիրառումն ու զարգացումը հանրապետության տարածքում, որոնցով նա օգտվում է, երաշխավորում է ազգային փոքրամասնությունների իրավունքները, նպաստավոր պայմաններ ստեղծում կյանքի բոլոր ոլորտներում նրանց զարգացման համար:

11. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական ինքնիշխանության խորհրդամիջները՝ գերբը, դրոշը և հիմնը սրբազն են և պահպանվում են օրենքով:

12. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ճանաչում և միանում է Քելսինկիի համաձայնագրին, համընդիանուր ճանաչված միջազգային իրավական այլ ակտերին և ուրիշ պետությունների հետ իր հարաբերությունները կառուցում է ինքնիշխան, իրավահավասարության, ուժ գործադրելուց կամ ուժով սպառնալուց փոխադարձ հրաժարման վեճերի խաղաղ կարգավորման ներքին գործերին չմիջանալու մարդու իրավունքների և հիմնական ազատությունների հարգման իրենց ճակատագիրը տնօրինելու ժողովուրդների իրավունքի և իրավահավասարության, պետությունների համագործակցության, միջազգային իրավունքի հանուրի կողմից ճանաչված սկզբունքներից և նորմերից, ԽՍՀՄ կնքած միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների բարեխիղդ կատարման սկզբունքների պահպանման հիման վրա:

ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՃՐՈՒ ՆԱԽԱԳԱԴ՝

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՃՐՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Վ. ՋԱԿՈԲՅԱՆ

ՀՂԴ պետական արխիվ, ֆոնդ 1, ցամկ 2, պահպանման միավոր 320,  
կապ 28, թերթ 1-6:

*Президенту СССР  
М. С. Горбачеву*

Уважаемый Михаил Сергеевич.

